

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՂԲԵՋԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՓԱՐԻԶԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻՆ (1919-1920 ԹԹ.)**

ՂՈՒՅԱՆ ՅՈՒ. Վ.

Անտանտի երկրների հաղթանակով ավարտված Առաջին համաշխարհային պատերազմից հետո պարտություն կրած երկրների հետ հաշտության պայմանագիր կնքելու և հարաբերությունները կարգավորելու համար միջազգային կոնֆերանս հրավիրելու անհրաժեշտություն առաջացավ:

Ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ արտասահմանի հայ բնակչության ու ազգային-քաղաքական կազմակերպությունների մեջ այն համոզմունքը կար, որ Հայաստանն իրավունք ուներ արդար հատուցում ստանալու, քանի որ Ռուսաստանի խորհրդայնացումից ու պատերազմից դուրս գալուց հետո էլ շարունակեց կռվել դաշնակիցների կողքին՝ նրանցից ստանալով զենք ու զինամթերք և, ցավոք, տալով տասնյակ հազարավոր սպանվածներ, վիրավորներ ու հաշմվածներ¹: Փարիզում կայանալիք Խաղաղության կոնֆերանսի աշխատանքները նախատեսվում էր սկսել 1919 թ. հունվարին: ՀՀ կառավարությունը կոնֆերանսին մասնակցելու պաշտոնական հրավեր չէր ստացել, սակայն Հայկական հարցի քրննարկումը նախապատրաստելու համար որոշեց պատվիրակություն ուղարկել Փարիզ: Պատվիրակության անդամներ ընտրվեցին Ավետիս Ահարոնյանը, Միքայել Պապաջանյանը և Համո Օհանջանյանը, որն այդ ժամանակ արտասահմանում էր: Մտադրություն կար, որ իբրև պատվիրակ Փարիզ մեկնեին նաև Արամ Մանուկյանն ու Ալեքսանդր Խատիսյանը, սակայն Հովհաննես Քաջազունին պընդեց, որ երկուսի ներկայությունն էլ անհրաժեշտ է Հայաստանում, և նրանց թեկնածությունը հանվեց²: 1918 թ. դեկտեմբերի 3-ին Հայաստանի Խորհրդի կողմից կազմված պատվիրակությունը (նախագահ՝ Ավ. Ահարոնյան) լիազորվեց ՀՀ-ի անունից բանակցություններ վարելու և համաձայնության գալու ի պաշտպանություն Հայաստանի իրավունքների և շահերի³: Պատվիրակության լիազորություններն ու հրահանգները վերապահվեցին կառավարությանը: Եվրոպա էին մեկնելու երեք պատվիրակ, երկու խորհրդական, զանազան հանձնարարություններ կատարելու համար՝ 6 աշխատակից, 1 գործավար և 2 քարտուղար, ընդամենը՝ 14 հոգի⁴: 1918 թ. դեկ

¹ Համահայկական խորհրդակցություններ(1912-1920 թթ.), Ե., 2004, էջ 651:

² Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 98:

³ Հարությունյան Ա., Սևրի պայմանագիրը և հայ հասարակական քաղաքական միտքը, Ե., 2004, էջ 9:

⁴ Սևրի պայմանագիրը ստորագրելու նախօրյակին, որպես գաղտնի որոշում, Նախարարների խորհուրդը Հայաստանի և Թուրքիայի միջև գծվելիք սահմաններն ուսումնասիրող մի հանձնախումբ էր նշանակել, որի անդամներն էին՝ գորավար Ղորղանյանը (նախագահ), Վահան Փափազյանը և պրոֆ. Աստվածատուր Խաչատուրյանը (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 14):

տեմբերի 3-ի նիստում Հայաստանի խորհրդարանը ձայների մեծամասնությամբ ընդունեց կառավարության առաջարկած օրինագիծը Եվրոպա գնացող պատվիրակությանը 700.000 ռուբլի տրամադրելու վերաբերյալ⁵:

Երևանից Փարիզ ճանապարհը պատվիրակության համար լի էր դժվարություններով, որոնց պատճառով էլ նա Փարիզ հասավ միայն 1919 թ. փետրվարի սկզբներին: Այս հանգամանքը դարձել է քրննարկման ու քննադատության առարկա: Այսպես, Առաջին հանրապետության պետական գործիչ, ՀՅԴ անդամ Ա. Բաբայանը իր «Էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից» գրքում Ավ. Ահարոնյանին մեղադրում է այն բանում, որ թեև Դաշնակցական ֆրակցիան նրան խնդրել էր Փարիզ մեկնել միայնակ, որպեսզի ճամփորդությունը արագ ընթանա, և պատվիրակներին առաջարկել էր մեկնել առանց տիկինների, սակայն Ահարոնյանը չկամեցավ միայնակ մեկնել և բանակցությունների մեջ մտավ Կ. Պոլսի անգլիական հրամանատարի հետ, որպեսզի իր տիկինը կարողանա իրեն ուղեկցել: «Այսպիսով նա ուշացավ, մոտ երկու շաբաթ՝ Թիֆլիսում սպասելով անգլիական հրամանատարի թույլտվությանը: Եվ Փարիզ հասավ կոնֆերանսը սկսելուց շատ ուշ»⁶, - գրում է Ա. Բաբայանը: Ըստ նրա, պատվիրակության անդամ Մ. Պապաջանյանը ևս ուշացավ, քանի որ «Թիֆլիսից գնաց Բաքու, ավելի հարմար համարելով նախօրոք կարգադրելու իր կնոջ նավթային գործերը, մնաց այնտեղ երկար ժամանակ և ուշ, իր կնոջ, գոքանչի, դայակի և աներոջ որդու հետ, մեծ կապոցներով մեկնեց Փարիզ»⁷: Ա. Բաբայանի վկայությամբ՝ թեև պահանջ եղավ Պապաջանյանին անմիջապես զրկել պատվիրակության անդամի պաշտոնից, բայց կառավարությունը չմիջամտեց, և նա իր «շքախմբով» Փարիզ հասավ միայն 1919 թ. գարնանը⁸: Հետագայում անդրադառնալով վերը նշված պարսավանքներին՝ Ավ. Ահարոնյանը Ա. Բաբայանին մեղադրեց կատարյալ թյուրիմացության մեջ ու հանդես եկավ դեպքերի սեփական մեկնաբանություններով⁹: Ավ. Ահարոնյանը գրում է, որ Երևանում կառավարությունն իրեն ու տիկնոջը մի ընդհանուր անցագիր է տվել, և պատվիրակության հետ Փարիզ է մեկնել ոչ միայն իր կինը, այլև Հ. Օհանջանյանի կինը՝ ամուսնուն հասնելու համար: Յ. Ամատունին ու Վ. Փափագյանը գնացել են իրենց կանանց հետ, որոնց նկատմամբ անգլիացիները ոչ մի արգելք չեն հարուցել, և նրանց համար Կ. Պոլսի հետ ոչ մի բանակցություն տեղի չի ունեցել: «Ոչ թե երկու շաբաթ, այլ երկու օր իսկ ուշացած չենք մեզ ուղեկցող կանանց պատճառով»¹⁰, -

⁵ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., Ե., 2010, էջ 114:

⁶ Բաբայան Ա., Էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրե, 1959, էջ 35:

⁷ Նույն տեղում, էջ 40:

⁸ Նույն տեղում:

⁹ Քանի որ Ավ. Ահարոնյանի վկայությունները զետեղված են Ա. Բաբայանի գրքի հավելվածում, ուստի հղումները կատարում ենք նշված գրքից:

¹⁰ Նույն տեղում, էջ 51:

գրում է Ավ. Ահարոնյանը: Նա ընդունում է, որ պատվիրակությունն ուշացել էր, այն էլ ոչ թե երկու, այլ երեք շաբաթ:

Պատվիրակությունը Երևանից Թիֆլիս է ճանապարհվում դեկտեմբերի 8-ին, սակայն այնտեղ է հասնում դեկտեմբերի 18-ին, քանի որ սկսվել էր հայ-վրացական բախումը, երկաթգիծը փակ էր, և նրանք Ղարաքիլիսայում մնում են մինչև դեկտեմբերի 14-ը՝ հույս ունենալով, որ այն կբացվի, ապա ստիպված են լինում ավտոմոբիլով Դիլիջանով անցնել Ադստաֆա, այնտեղից էլ, մեծ դժվարություններով՝ Թիֆլիս: Վրաստանի մայրաքաղաքում հայ-վրացական հարաբերությունները լարվածության գագաթնակետին էին հասել, և հայ բնակչության նկատմամբ սկսվել էին հալածանքներ ու ձերբակալություններ. ձերբակալվում է նույնիսկ պատվիրակության քարտուղար Տ. Միրզոյանը, որն ազատ է արձակվում միայն Ավ. Ահարոնյանի բողոքից հետո¹¹: «Այս պայմաններում,- գրում է Ավ. Ահարոնյանը,- վրացական կառավարությունը լսել անգամ չէր ուզում մեր պատվիրակության Բաթում մեկնելու մասին, իսկ անգլիական զինվորական իշխանությունները, զայրացած հայ-վրացական պատերազմից, հայկական պատվիրակությանը հայտարարում են, թե չպիտի թույլ տան որևէ պատվիրակութեան մեկնումը, քանի այս կռիվը շարունակուի¹²»: Ապարդյուն է անցնում նաև Ավ. Ահարոնյանի դիմումը գորավար Բայբրոֆին: Պատվիրակության քարտուղար Տ. Միրզոյանի ծանոթ անգլիացի կապիտանի միջնորդությունից ու պատվիրակների երկար խնդրանքներից հետո Բաթումից Թիֆլիս ժամանած գորավար Քուր Քոլիսը հունվարի 9-ին վերջապես նրանց արտոնում է մեկնել Բաթում: «Այս է իրողությունը, և ահա թե ինչու ուշացանք Թիֆլիսում», - գրում է Ավ. Ահարոնյանը:

Ըստ Ս. Վրացյանի՝ Ավ. Ահարոնյանի ղեկավարությամբ Եվրոպա մեկնած ՀՀ պատվիրակությունը 1919 թ. փետրվարի 4-ին արդեն Փարիզում էր¹³: Պատվիրակության՝ Փարիզ հասնելու օրվա վերաբերյալ այլ տեղեկություն է հաղորդում Ավ. Ահարոնյանը, որի՝ 1919 թ. ապրիլի 24-ի ՀՀ ԱԳ նախարար Ս. Տիգրանյանին գրած նամակից տեղեկանում ենք, որ նրանք Փարիզ են հասել փետրվարի 3-ին¹⁴, ինչը, մեր կարծիքով, ավելի հավաստի է, քանզի պատվիրակության ղեկավար լինելով՝ նա պարզապես չէր կարող ժամանելու օրը շփոթել:

Մեծ տերությունների կողմից իրենց անկախությունը ճանաչելու նպատակով Փարիզի խաղաղության վեհաժողովին մասնակցելու ցանկություն էին հայտնել նաև Վրաստանը, Ադրբեջանը և Հյուսիսային Կովկասի համադաշնությունը: Սակայն Առաջին աշխարհամարտի տարիներին Քառյակ տերությունների հետ իրենց ունեցած կապերի համար վարկաբեկված լինելով՝ Փարիզ պատվիրակություններ ուղարկելու հարցում նրանք բախվեցին բազմաթիվ դժվարությունների:

¹¹ Նույն տեղում, էջ 52:

¹² Նույն տեղում:

¹³ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 362:

¹⁴ Դաշնակցական կառավարության դոկումենտներից, Ե., 1922, էջ 10:

Ադրբեջանի պատվիրակությունը (ղեկ.՝ պառլամենտի նախագահ Ալի Մարդան-բեկ Թոփչիբաշև) 1919 թ. հունվարի 8-ին¹⁵ Բաքվից դուրս գալով՝ անգլիական կառավարության կողմից տրամադրված նավով ճանապարհվում է Կ. Պոլիս և Հյուսիսային Կովկասի և Վրաստանի պատվիրակությունների հետ միաժամանակ Կ. Պոլիս է ժամանում 1919 թ. հունվարի 20-ին: Սակայն Փարիզ ուղևորվելու գործը խոչընդոտվում է քաղաքական պատճառներով: Ֆրանսիական կառավարությունը Կ. Պոլսում իր գերագույն կոմիսարի միջոցով հայտնում է, որ Ֆրանսիայի ԱԳ նախարարությունը պատվիրակության անդամներից ոչ մեկին Փարիզ մեկնելու թույլտվություն չի տալիս¹⁶: Վրաստանի և Ադրբեջանի պատվիրակություններին մերժում է կոնֆերանսին մասնակցելու հարցում՝ նկատի ունենալով, որ նրանք հակառակորդներ են, և նրանց վերաբերմունքը Դաշնակիցների հանդեպ պարզ չէ¹⁷: Ֆրանսիան այս հանրապետությունների, հատկապես Վրաստանի նկատմամբ դիրքորոշում էր ձևավորել Թիֆլիսում ֆրանսիական զինվորական առաքելության ղեկավար Պ. Շարդինիեի զեկույցներով, որը ժողովրդային կառավարությունը բնորոշում էր որպես ծայրահեղական և անընդունակ՝ ազնվորեն վարելու պետության գործերը¹⁸: Ինչ վերաբերում է Ադրբեջանի Հանրապետությանը, ապա այն ֆրանսիական դիվանագիտության համար հետաքրքրության առարկա չէր: Թեև Ֆրանսիայի ու Անգլիայի միջև Փարիզի կոնֆերանսում արդեն զգացվում էր հետպատերազմյան մրցակցությունը, որը դրսևորվում էր նաև Բաքվի նավթային հարստությունները ձեռք բերելու՝ Լոնդոնի փորձերի նկատմամբ Փարիզի անհանգստությամբ, սակայն դա գործնականում լուրջ հետևանքներ չունեցավ Ֆրանսիայի հարավ-կովկասյան քաղաքականության համար: Ֆրանսիայի դիրքորոշումը Ադրբեջանի անկախության նկատմամբ ակնհայտորեն դրսևորվեց նրանում, որ ադրբեջանական պատվիրակությանը կոնֆերանսին մասնակցելու համար մուտքի վիզա չտրամադրեց: Միայն 1919 թ. ապրիլի 22-ին ադրբեջանական պատվիրակությունը հնարավորություն ստացավ Կ. Պոլսից իտալական վիզայով, իտալական շոգենավով ուղևորվել Հռոմ, իսկ այնտեղից՝ Փարիզ: Դա գլխավորապես հաջողվեց ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի շնորհիվ, բրիտանական արտաքին գործերի գերատեսչության աջակցությամբ: Նա արդարացի հիմքեր չէր գտնում՝ բացառելու Ադրբեջանի ներկայացուցիչներին, երբ ուրիշ չճանաչված պատվիրակությունների թույլատրվել էր մուտք գործել Ֆրանսիայի մայրաքաղաք¹⁹: Այսպիսով, ադրբեջանական պատվիրակությունը նույնպես

¹⁵ Раевский А. Мусаватское правительство на Версальской конференции, Берлин, 1930, с. 7.

¹⁶ <http://karabakh-doc.azerall.info/azerpeople/ap060-1.php>, p.5.

¹⁷ Բաբայան Ա., նշվ. աշխ., էջ 35:

¹⁸ Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, Ե., 2005, հ. 1, էջ 311:

¹⁹ Նույն տեղում, էջ 315:

չկարողացավ հասնել Խաղաղության կոնֆերանսի բացմանը և այնտեղ հայտնվեց միայն 1919 թ. մայիսի 7-ին²⁰:

Նշենք, որ ադրբեջանական պատվիրակության մեջ վիճելի՝ սահմանային ու տարածքային հարցերով զբաղվում էր Շեյխ Ուլ-Իսլամովը, որի վրա էր դրված նաև վիճակագրական հաշվետվությունները և քարտեզները կազմելու գործը: Դեպքերն այնպես զարգացան, որ ադրբեջանական պատվիրակությունն ստիպված էր Փարիզ հասնել ոչ ամբողջական կազմով: Մասնավորապես, կոնֆերանսում հայկական պատվիրակությունը հարց բարձրացրեց ադրբեջանական պատվիրակությունից Ա. Աղանին հանելու վերաբերյալ: Նրան մեղադրանք ներկայացվեց թուրքական խորհրդարանում և մամուլում դաշնակիցների դեմ ունեցած ելույթների համար, որից հետո անգլոֆրանսիական հրամանատարությունը նրան ձերբակալեց²¹: «Դա մեր խորհուրդն է, նա անցանկալի մարդ է, որպես թուրքական լրագրող և թուրքական պառլամենտի պատգամավոր, որը գրել ու խոսել է մեր դեմ»²², - նշել էին դաշնակիցները: Թոփչիբաշևի հայտարարություններն այն մասին, որ նա ծնունդով Ղարաբաղից է, Ադրբեջանի պառլամենտի պատգամավոր է և պատվիրակությանն անհրաժեշտ մարդ, արդյունք չտվեց, ինչպես նաև այն երաշխավորական նամակը, որ Ա. Աղանն ստացել էր գեներալ Թոմսոնից: Բացի Ա. Աղանից, երիտթուրքական կուսակցության հետ համագործակցելու մեղադրանքով Կ. Պոլսում ադրբեջանական պատվիրակությունից դուրս թողեցին նաև Հուսեյնզադեին, որին վերապահված էր պատմաթնոգրաֆիական նյութերի ընտրության, նոր հանրապետության քարոզչությունն իրականացնելու պատասխանատվությունը: Համաձայն ադրբեջանական պատվիրակության անդամների՝ այդ հանգամանքը հետագայում իրեն զգալ տվեց եվրոպական մամուլի հետ կապերի կարգավորման ու շփումների ընթացքում, համաշխարհային հասարակայնության աչքում անկախ Ադրբեջանի վերաբերյալ դրական կարծիք ստեղծելու գործում²³:

Բացի այս ամենից, դաշնակիցները ցանկություն չունեին կոնֆերանսում տեսնել ռուսական կայսրության տարածքի բոլոր անկախ պետական կազմավորումների բաժան-բաժան դիվանագիտական ներկայացուցչություններին: Անտանտի երկրների շատ ներկայացուցիչներ գտնում էին, որ «ռուսական հարցը» անհրաժեշտ է դնել միասնական բլոկով՝ այստեղ ներառելով նոր հանրապետությունների անկախության հռչակման օրինականության հարցի քննարկումը: Թերևս դա էր պատճառը, որ պատվիրակության համար դրժվարությամբ դեպի Փարիզ ճանապարհ հարթած Թոփչիբաշևը Ադրբեջանի վարչապետին գրած նամակում ստիպված էր

²⁰ <http://karabakh-doc.azerall.inf/ru/azerpeople/ap060-1.php>, p.3.

²¹ Ա. Աղանը 1918 թ. հունիսին, որպես քաղաքական հարցերով Նուրի փաշայի խորհրդական, եկել էր Ադրբեջան, սերտ կապերի մեջ էր երիտթուրք պարագլուխների հետ:

²² Раевский А., նշվ. աշխ., էջ 26:

²³ Волконский М., Муханов В. По следам Азербайджанской демократической республики, М., 2007, с. 108.

կասկած հայտնել պատվիրակության հաջողության վերաբերյալ. «Բայց հազիվ թե հաջողվի Փարիզում համոզել Համաձայնության տերություններին, որոնք մինչև հիմա ամուր կանգնած են նոր կազմավորված կառավարություններին չճանաչելու հողի վրա, բացի Լեհաստանից ու Ֆինլանդիայից»²⁴:

Հայկական կողմը, որը կոնֆերանսում ներկայացված էր երկու պատվիրակությունով՝ Պոդոս Նուբար փաշայի (արևմտահայության) և Ավետիս Ահարոնյանի (ՀՀ կառավարության) ղեկավարությամբ, հետամուտ էր հասնելու Հայկական հարցի լուծմանը՝ Արևմտյան ու Արևելյան Հայաստանի տարածքներում հայկական անկախ պետություն ստեղծելուն և մեծ տերությունների կողմից այն ճանաչելուն: Այդ նպատակով երկու հայկական պատվիրակությունների նախագահների ստորագրությամբ հայկական պահանջները ներկայացվեցին հաշտության վեհաժողովին, որտեղ, ի թիվս Արևմտյան Հայաստանի տարածքների ու Կիլիկիայի չորս սանջակների, նրանք պահանջեցին «Կովկասի Հայկական Հանրապետությունը՝ Երևանի ամրոցը նահանգը, Թիֆլիսի նահանգի հարավային մասը, Ելիզավետպոլի նահանգի հարավարևմտյան մասը, Կարսի նահանգը՝ բացառությամբ Արդահանից հյուսիս գտնվող շրջանի»²⁵: Ադրբեջանական կողմի գլխավոր ու հիմնական խնդիրը նույնպես մեծ տերություններին իր անկախությունը ճանաչել տալն էր: Հենց այդ նպատակին էին ուղղված ադրբեջանական պատվիրակության ողջ ջանքերը, թեև պահանջում էին նաև տարածքային, ֆինանսական, տնտեսական և այլ հարցերի անհապաղ քննարկում²⁶:

Ինչպես նկատում ենք, հայկական ու ադրբեջանական կողմերը փորձում էին հասնել դաշնակիցների կողմից իրենց անկախության ճանաչմանը: Առաջին հայացքից թվում է, թե նրանց միջև պետք է, որ խնդիրներ չառաջանային: Իրականում նրանց միջև առկա հակասությունները պայմանավորված էին առաջին հերթին սահմանային խնդիրներով և դրսևորվեցին Փարիզում: Եթե նկատի ունենանք, որ Ադրբեջանը, ի թիվս այլ տարածքների, իրենն էր համարում նախկին Ելիզավետպոլի նահանգի կազմի մեջ մտնող Ղարաբաղն ու Ջանգեզուրը, ապա ակնհայտ կդառնա, որ Փարիզում Միացյալ Հայաստանի ճանաչմանը ձգտող հայկական կողմը չէր կարող դա հաշվի չառնել և չհակադրել ադրբեջանական ձգտումներին:

Ընդհուպ մինչև 1920 թ. սկիզբը դաշնակից պետությունները ոչինչ չարեցին անդրկովկասյան հանրապետությունների անկախությունը ճանաչելու համար, քանի որ դա նրանց քաղաքական հաշվարկների մեջ չէր մտնում: Դաշնակիցները դա արեցին միայն 1920 թ. հունվարին, այն էլ բոլշևիկների կողմից Անդրկովկասի նվաճման վտանգով պայմանավորված՝ ակնկալիքով, որ հանրապետությունների ուժերով փակվի բոլշևիկների առաջխաղացման ճանապարհը: Փարիզի խաղաղության կոնֆերանսի շրջանակում անդրկովկասյան հանրապետությունների միջև առկա սահմանային հարցերը

²⁴ Նույն տեղում, էջ 109:

²⁵ Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 363:

²⁶ Волконский М., Муханов В., նշվ. աշխ., էջ 112:

լուծելու հայկական կողմի ջանքերը ցանկալի արդյունք չտվեցին: Դա, մի կողմից, վրաց-ադրբեջանական կողմի՝ սահմանային հարցերը Եվրոպայում քննարկելուց հրաժարվելու, մյուս կողմից՝ մեծ տերությունների անհետևողականության ու անսկզբունքայնության հետևանք էր: Հանրապետությունների միջև սահմանային հարցերը մնացին առկախ: Կովկասյան կոնֆեդերացիա ստեղծելու վերաբերյալ պատվիրակությունների միջև Փարիզում ընթացած բանակցությունները նույնպես արդյունք չտվեցին, չնայած որ Ադրբեջանն այդ ուղղությամբ քիչ ջանքեր չգործադրեց: Ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Եվրոպայում խնդրի առնչությամբ կողմերը հանդես բերեցին տարբեր մոտեցումներ ու դիրքորոշումներ, որի պատճառով էլ կոնֆեդերացիայի ստեղծման հարցը մնաց չլուծված: Սակայն դա չիսանգարեց, որ կոնֆեդերացիայի ստեղծման բանակցությունների ժամանակ Ադրբեջանը մեղադրեր Հայաստանին՝ համակովկասյան համերաշխության հարցում ապակառուցողական դիրքորոշման մեջ, որն, ըստ նրանց, խանգարում էր այդ նպատակին հասնելու:

Այդուհանդերձ, ինչքան էլ անդրկովկասյան հանրապետությունները միմյանց՝ մասնավորապես Հայաստանը Վրաստանի ու Ադրբեջանի հետ ունեին լարված ու ամբողջովին չկարգավորված հարաբերություններ, չէին կարող համատեղ քայլեր չձեռնարկվել, որոնք վերաբերում էին ողջ երկրամասի անվտանգությանը: Այդպիսի անհրաժեշտություն առաջացավ, երբ հայտնի դարձավ Անդրկովկասից դաշնակից զորքերը դուրս բերելու մասին:

Անգլիական զորքերը Կովկասից չհանելու վերաբերյալ կոնֆերանսին հղվելիք համատեղ դիմում ներկայացնելու և Կովկասից հատուկ հանձնաժողով ուղարկելու հարցը պատվիրակությունների հատուկ քննարկման առարկա էր դարձել դեռևս հունիսին: Խորհրդակցությանը հրավիրվել էր նաև հայկական կողմը: Ադրբեջանցիներն առաջարկեցին Կովկասյան զործերի վերաբերյալ հանձնաժողով ստեղծել, որի հետ կապված՝ հայկական կողմը նրանց տվեց հետևյալ երեք հարցերը. ինչպիսի՞ն է նրանց վերաբերմունքը Միացյալ Հայաստանի նկատմամբ, ընդունո՞ւմ են, որ սահմանային ու տարածքային բոլոր հարցերը վերջնական ձևով պետք է լուծվեն միայն Խաղաղության կոնֆերանսում, արդյո՞ք անհրաժեշտ են համարում, որ անգլիական զորքերը Կովկասից չհանելու վերաբերյալ անհապաղ դիմում հղվի կոնֆերանսին: «Մենք ընդունում ենք, որ գոյություն ունի անկախ Ադրբեջան ու անկախ Վրաստան: Դուք էլ ընդունեք, որ կա Միացյալ Հայաստան: Մեզ համար և մեր թուրքահայ եղբայրների համար բարոյական առումով դա կարևոր է: Եթե այդ հարցերի շուրջ չպայմանավորվենք, ապա մենք ոչ միայն չենք կարող ձեզ հետ ստորագրել Կոնֆերանսին ուղղված դիմումը, այլև նույնիսկ պիտի ջանանք, որ նման հանձնաժողովում Քաջազունին չլինի»²⁷, - նշում է Մ. Պապաջանյանը:

²⁷ Раевский А., նշվ. աշխ., էջ 63-64:

Օգոստոսի 15-ին ադրբեջանական պատվիրակության բնակարանում հավաք է հրավիրվում կովկասյան բոլոր չորս պատվիրակությունների անդամների մասնակցությամբ: Մ. Պապաջանյանը հայտարարում է, որ հարկ է շտապ քննարկել կոնֆերանսին ուղղվելիք դիմումի հարցը՝ Կովկասում դաշնակիցների գործերը թողնելու մասին: Հայկական կողմի առաջարկը՝ բացառությամբ լեռնականների ներկայացուցիչների, ընդունում են բոլորը: Որոշվում է նման հավաք կազմակերպել նաև մյուս հարցերի վերաբերյալ, իսկ դիմումի խնդրով պետք է շտապել: 1919 թ. օգոստոսի 28-ին Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի պատվիրակությունների անունից, նախագահների ստորագրությամբ, դիմում է ներկայացվում դաշնակից պետությունների նախագահ Ժ. Կլեմանսոյին՝ խնդրելով դաշնակցային (անգլիական) գործերը Անդրկովկասում թողնել այնքան ժամանակ, մինչև որ հանրապետությունների անկախությունը ճանաչվի²⁸: Հանրապետությունների անհանգստությունը հիմնավորվում էր այն մտահոգությամբ, որ դաշնակից գործերի հեռանալը Անդրկովկասից կարող էր տխուր հետևանքներ ունենալ²⁹: Մակայն դիմումն անարդյունք եղավ, քանի որ անգլիական գործերը օգոստոսի վերջերին դուրս եկան Բաքվից, իսկ հետո՝ ընդհանրապես Անդրկովկասից (բացառությամբ Բաթումի մարզից, որը նրանք թողեցին միայն 1920 թ. ամռանը):

Հանուն արդարության արժե նշել, որ անդրկովկասյան պատվիրակությունները իրենցից կախված ամեն ինչ անում էին դաշնակիցների կողմից ճանաչվելու, ազգային պետությունների անվտանգությունը ապահովելու և դրա համար երաշխիքներ ստանալու առումով, թեև հարկադրված էին գործել աննպաստ պայմաններում: Մշտապես առկա էին նյութական, կազմակերպչական բնույթի խրնդիրներ, հատկապես դրամական միջոցների պակասը խանգարում էր պատվիրակությունների նպատակների իրականացմանը: Ճիշտ է, ադրբեջանական պատվիրակությունը ապահովված էր մեծ գումարներով, այդուհանդերձ, իր ծրագրերի իրագործման համար կառավարությանը պարբերաբար հիշեցնում էր նոր ֆինանսական միջոցներ տրամադրելու անհրաժեշտության մասին³⁰: Այսպես՝ Թոփչիբաշևի՝ Բաքու ուղարկած նամակներից պարզ է դառնում, որ պատվիրակությունը քարոզչություն իրականացնելու համար ունեցել է դրամական միջոցների պակաս: Չնոռանանք, որ ադրբեջանական քարոզչությունը, հատկապես դրա հակահայկական ուղղվածությունը, դրսևորվում էր նաև Եվրոպայում՝ պատվիրակության գործունեության շնորհիվ: Գիտակցելով, որ Ադրբեջանի համար երաշխիքներ անհրաժեշտ է փնտրել ոչ այնքան Եվրոպայում, որքան օվկիանոսից այն կողմ՝ Ա. Թոփչիբաշևը կարճ ժամանակում կարողացավ գործնական հարաբերությունների մեջ մտնել ԱՄՆ-ի ներկայացուցիչների հետ: Փաստաբաններ Վ. Չանդլերի և Մ. Ռոբինի հետ պայմանագիր կնքվեց, որի համաձայն՝

²⁸ Նույն տեղում, էջ 11:

²⁹ Յառաջ, Ե., 23.X.1919:

³⁰ <http://karabakh-doc.azerall.info/ru/azerpeople/ap060-1.php,p.3>.

նրանք պարտավորվեցին Ադրբեջանի շահերը ներկայացնել ԱՄՆ-ում ու Կանադայում: Այդ նպատակով այնտեղ ուղարկվեց Փարիզում հրատարակված՝ Ադրբեջանի վերաբերյալ անգլերեն ու ֆրանսերեն գրքերի և բրոշյուրների զգալի քանակություն³¹: Կառավարության նախագահին իրազեկելով ամերիկացի որոշ հրեաների հետ կապի մեջ մտնելու մասին՝ Ա. Թովչիբաշևը նաև տեղեկացնում էր, որ վերջիններս խորհուրդ են տվել մի քանի մարդ ուղարկել ԱՄՆ, որպեսզի հակազդեն «հայերի աղմկոտ քարոզչությանը, որոնք Ադրբեջանին մեղադրում էին Բաքվի հայ բնակչության սեպտեմբերյան կոտորածների համար»³²:

Թովչիբաշևը ջանում էր արտասահմանում ադրբեջանական լոբբիի ստեղծել՝ այն դիտելով որպես կարևորագույն պայման միջազգային հարաբերությունների համակարգին ինտեգրվելու և իր երկրի շահերի պաշտպանության տեսակետից: «Պատվիրակության ջանքերի շնորհիվ 1919-1920 թթ. հաջողվեց եվրոպական երկրներում նյութեր տարածել Ադրբեջանի պատմական անցյալի, նրա հումքային հարստությունների, ռուսական լծի բնույթի, Կովկասում հարևանների հետ հարաբերությունների, հայ-ադրբեջանական հակամարտության պատճառների, ադրբեջանցիների նկատմամբ հայերի զազանությունների, 1918 թ. մարտյան կոտորածի և այլնի մասին: Այդ բոլորը օգնեցին ոչ միայն մեր երկրի մասին տարածել գիտելիքներ, այլ նաև հաղթահարել նրա և նրա ժողովրդի մասին կեղծ պատկերացումները, որ ձևավորվել էր ռուս-հայկական թշնամական քարոզչության հետևանքով»³³, - նշում է Թովչիբաշևը՝ անդրադառնալով Փարիզի կոնֆերանսում ադրբեջանական պատվիրակության գործունեությանը:

Խաղաղության կոնֆերանսի շրջանակում հայերի հետ իրենց փոխհարաբերությունները կառուցելու հարցում ադրբեջանական կողմը շատ էր կարևորում Ադրբեջանից տեղեկատվության պարբերական ստացումը՝ գտնելով, որ «լավ տեղեկատվությունը հիմա ամեն ինչ է»³⁴: «Օրինակ՝ հայերը կանոնավոր տեղեկություններ են ստանում և իրադարձություններից միշտ տեղյակ են: Եթե այդպես անվստահությամբ չվարվեին, ապա կարելի կլիներ օգտվել իրենց տվյալներից: Ահա սրանից չորս օր առաջ մեզ մոտ էին Քաջազնունին ու Պապաջանյանը: Վերջինս հայտնեց, որ հունիսի 17-ին Շուշիում արյունալի բախում է եղել մերոնց ու հայերի միջև: Արդյո՞ք այդպես է՝ չգիտենք: Ընդհանրապես, Ղարաբաղի մասին մենք ոչ մի լուր չունենք, այն դեպքում, որ այդ հարցն այստեղ հայերի կողմից շատ փայլուն կերպով դրված է, և դրա մասին գիտեն տերությունների ներկայացուցիչները»³⁵, - ասված էր 1919 թ. հունիսի 8-10-ին Փարիզից Ադրբեջանի մինիստրների խորհրդի նախագահին գրված նամակում: Ա. Թովչիբաշևը նախ Կ. Պոլսից, այնուհետև Հռոմից ու Փարիզից կառավարությանը կանոնավոր իրազեկում էր տեղի ունեցած բանակցությունների, հանդիպումների,

³¹ Նույն տեղում, էջ 4:

³² Նույն տեղում, էջ 13:

³³ Նույն տեղում, էջ 4:

³⁴ Раевский А., նշվ. աշխ., էջ 49:

³⁵ Նույն տեղում:

պայմանագրեր կնքելու և այլնի մասին: Չնայած տրանսպորտի հետ կապված դժվարություններին ու դիվանագիտական փոստի բացակայությանը՝ նա 1919 թ. մարտ-նոյեմբեր ամիսներին կառավարությանը ուղարկել էր 11 հաղորդագրություն³⁶: Դրանցից աղբյուրական արխիվներում պահպանվել են միայն 7-ը: Մնացածները, ինչպես նաև պատվիրակության՝ 1919 թ. վերջի և 1920 թ. աշխատանքներին վերաբերող հաղորդագրությունները, աղբյուրական ուսումնասիրողների կարծիքով՝ կամ կորել, կամ էլ հայտնվել են Մոսկվայում: Առաջին և վերջին անգամ այդ փաստաթղթերը՝ ժողովածուի տեսքով, հրատարակվել են 1927 թ. Բաքվում, բոլշևիկ պատմաբան Ա. Ռանսկու կողմից:

Նկատենք, որ հաղորդակցության հետ կապված խնդիր ուներ նաև հայկական պատվիրակությունը, որի նախագահ Ավ. Ահարոնյանը ՀՀ կառավարությանը մեկ անգամ չէ, որ բողոքել էր կապի վատ վիճակից: Կառավարությունն էլ իր հերթին էր բողոքում վատ կապից՝ դժգոհելով, որ Փարիզի պատվիրակությունից քիչ տեղեկություններ են ստացվում³⁷: Այս առումով Ավ. Ահարոնյանին խիստ քննադատեց Ա. Բաբայանը, ըստ որի՝ կառավարությունը տեղեկություններ էր ստանում պատահական աղբյուրից կամ էլ ճամփորդներից: «Պատվիրակությունը չկարողացավ կանոնավորապես տեղյակ պահել կառավարությանը քաղաքական անցուղարձի մասին: Մենք բոլորովին անտեղյակ էինք մեր հարցի շուրջ կատարվող քայլերին»³⁸, - գրում է Ա. Բաբայանը: «Արդարև, պատվիրակությունն իր գործունեության սկզբնական շրջանում շիֆրով հեռագրերի հնարավորությունից զրկված էր. Մեր հեռագրերը անցնում էին միշտ որևէ դաշնակից պետության խողովակով: Պատվիրակությունը հիմքեր ուներ զգուշանալու իր կառավարության հետ այդ ճամբով քոնֆիտենշը կապ պահպանել: Մնում էր ուրեմն սուրհանդակների միջոցը»³⁹, - խնդրի վերաբերյալ բացատրություն է տալիս Ավ. Ահարոնյանը: Միաժամանակ, պատասխանելով քննադատությանը, Ավ. Ահարոնյանը փաստերով ցույց տվեց, որ 1919 թ. փետրվարից սկսած՝ ինքը միշտ ժամանակին և տեղին իրազեկել է ՀՀ կառավարությանը, այն էլ՝ հաճախ մանրամասն⁴⁰: «1919 թուի փետրվարից (երբ Պատվիրակությունը Պարիզ հասավ) մինչև 1921 թուի փետրուարը, այսինքն երկու տարուայ ընթացքում Պատվիրակությունը Երևան է ճամբել 35 սուրհանդակ բացի ամերիկյան միսսիայի միջոցով դրկուածները: Ուրեմն մոտ երեք շաբաթը՝ մի սուրհանդակ: Պատվիրակությունը իրավունք ունի կարծելու, որ այսպիսով իր պարտքը լիովին այս մասին կատարել է հանդեպ իր կառավարության»⁴¹:

³⁶ <http://karabakh-doc.azerall.inf/ru/azerpeople/ap060-1.php,p.7>.

³⁷ Հայաստանի պառլամենտի արձանագրությունները, էջ 229:

³⁸ Բաբայան Ա., նշվ., աշխ., էջ 35:

³⁹ Նույն տեղում, էջ 52:

⁴⁰ Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 25:

⁴¹ Բաբայան Ա., նշվ., աշխ., էջ 35:

Հայտնի է, թե ինչ ավարտ ունեցավ Փարիզի կոնֆերանսը և ինչ որոշումներ կայացրեց, սակայն, անկախ արդյունքներից, հարկ է փաստել, որ ՀՀ պատվիրակությունը, ի տարբերություն իր հարևանների, գործեց ավելի արդյունավետ ու կազմակերպված, որքան էլ անհարթություններ ու տարաձայնություններ ուներ նրանց հետ: ՀՀ դիվանագիտությունը, որն առաջին քայլերն էր անում միջազգային այդ մեծ ֆորումի շրջանակում, փորձեց հնարավորինս ներկայացնել հայկական պահանջատիրությունը և պաշտպանել ազգային շահը: Անկախ այն հանգամանքից, որ Սևրի պայմանագիրը այդպես էլ կյանքի չկոչվեց, դրա կայացման գործում անուրանալի են ՀՀ դիվանագիտության ջանքերը: Փարիզի կոնֆերանսի ընթացքը ցույց տվեց, որ մեծ տերությունների հիմնական ձգտումը Եվրոպայի քաղաքական նոր քարտեզը իրենց հարմար ձևով գծելն ու սեփական շահերը պաշտպանելն էր: ՀՀ պատվիրակության ղեկավար Ավ. Ահարոնյանը ճիշտ էր գնահատում կոնֆերանսի ընթացքը, երբ դեռևս 1919 թ. օգոստոսի 8-ին վարչապետ Ալ. Խատիսյանին գրում էր. «Իմ սիրելի Ալեքսանդր Իվանիչ, որ այս կոնֆերենցիան, ինչպես գրեցի պաշտոնական զեկույցիս մեջ, փոխադարձ շահերի ամենավատ տեսակի իմպերիալիստական ձգտումների բախումների շնորհիվ միանգամայն պարագիտիկ վիճակի մեջ է, ամեն տեղ ստեղծեց հրդեհ, առանց հնար ունենալու մարել կրակը: Մենք, ինչպես միշտ, առաջին զոհերն ենք: Ինչ էլ լինի, դադար չպիտի առնեմ, կանեմ անկարելին, հուսահատականը. կհաջողեմ արդյոք»⁴²:

Այսպիսով, կարող ենք ասել, որ Անդրկովկասի նորանկախ հանրապետությունները անփորձ էին միջազգային դիվանագիտական հարաբերություններ իրականացնելու մեջ, առավել ևս՝ մեծ տերությունների կողքին: Այդպես է բնութագրվում, օրինակ, Ադրբեջանի դիվանագիտությունը տվյալ ժամանակաշրջանում. «Հարկ է ընդունել, որ ԱԳՆ-ը, ի տարբերություն ռազմական նախարարության, որտեղ կային մի ամբողջ շարք կադրային սպաներ հին դպրոցից, չէր կարողանում հպարտանալ իր շարքերում պրոֆեսիոնալ դիվանագետների առկայությամբ, որոնք աշխատանքի փորձ կունենային Եվրոպայի տարբեր երկրներում և սերտ համագործակցություն արտասահմանյան գործընկերների հետ: Անվիճելի է, որ դա չէր կարող չազդել Ադրբեջանի դիվանագիտական աշխատակիցների ակտիվ և նույնիսկ ինքնուրույն գործունեության արդյունքների վրա»⁴³:

Անփոփելիով նկատենք, որ Փարիզի խաղաղության կոնֆերանսում Հայաստանն ու Ադրբեջանը այդպես էլ չկարողացան մեղմել այն տարաձայնություններն ու վեճերը, որոնց պատճառով մշտապես գտնվում էին լարված հարաբերությունների մեջ: Ուստի քրննարկված հարցերի վերաբերյալ կողմերը փոխզիջումային լուծումների չգիմեցին, և նրանց միջև տարածքային հարցերի, կոնֆեդերացիայի ստեղծման, համատեղ քայլեր կատարելու առնչությամբ ընթացող բանակցություններն ավարտվեցին անարդյունք:

⁴² Դաշնակցական կառավարության դոկումենտներից, էջ 23:

⁴³ Волконский М., Муханов В., նշվ. աշխ., էջ 119:

**УЧАСТИЕ АРМЕНИИ И АЗЕРБАЙДЖАНА
В ПАРИЖСКОЙ МИРНОЙ КОНФЕРЕНЦИИ (1919-1920 ГГ.)**

ГУЛЯН Ю. В.

Резюме

В ходе конференции закавказские делегации сделали все возможное, чтобы добиться признания со стороны союзников в вопросе обеспечения безопасности национальных государств и получения гарантий. На Парижской мирной конференции Армения и Азербайджан так и не смогли сгладить разногласия и споры, ставшие причиной напряженных отношений. Поскольку стороны по обсуждаемым вопросам занимали разные позиции и не шли на взаимные уступки, то переговоры между ними оказались безуспешными.

**PARTICIPATION OF ARMENIA AND
AZERBAIJAN IN THE PARIS PEACE CONFERENCE (1919 - 1920)**

YU. GHULYAN

Abstract

Trans Caucasian delegations did their best to be recognized by the allies to meet the requirements of national states and to earn guarantees, though they had to act under unfavourable conditions. The delegation of Armenia unlike its neighbours acted more effectively, well-organised and under favourable conditions. At the Paris peace Conference Armenia and Azerbaijan were unable to ease the discord between them which led to their strained relations. With no concession found, their negotiations ended with no result.